նշանակութիւն չունի, իսկ Զաւադի և Բագուի գաւառում աւելի եւս պակաս։

Շերամապահութիւնը ընդունվում է այս տեղ իբրեւ կողմնակի աղբիւր արդիւնքի, ուստի և յատկացնում են նրան միայն ազատ ժամերը։ Առաջ, երբ այս պարապմունքը տալիս էր մեծամեծ օգուտներ, գիւղացիք վերաբերվում էին դէպի նա աւելի ուշադրութեամբ, իսկ վերջերում, երբ զանազան հիւանդութիւնները փչացնում են ոչ միայն որդերին, այլ եւ ամբողջ շերամապահական ցանքսերը, սկսել են պարապել աւելի պակաս եռանդով։

Թթենու մեծ այգիներ համարեա այս տեղ չկան, բայց և այնպէս յիշեալ գաւառներում քիչ մարդիկ կան որ չունենան մի քանի տասնեակ, նոյն իսկ և հարիւրաւոր թթենիներ, այնպէս որ ընդհանուր քանակութեամբ նոքա բռնում են բաւականին նշանաւոր տարածութիւն, մօտաւորապէս 3000 դեսեատին։

Որդնաբուծութիւնը Բագուի նահանգի շատ տեղերում այժմ էլ ներկայացնում է բաւականին արդիւնաւոր պարապմունք, մանաւանդ այն պատճառով, որ այդ գործը համարեա ամբողջովին գտնվում է կանանց ձեռքում և չի զրկում տղամարդոց իրանց պարապմունքից։ Դժբաղդաբար, բնակիչները չիմանալով կանոնաւոր շերամապահութեան գիտութիւնը, սաստիկ դժուարացնում է այդ պարապմունքի առաջ գնալը, մինչդեռ մի քանի յաջող պայմաններում շերամապահութիւնը կարող էր նշանաւոր դեր խաղալ գիւղատնտեսութեան մէջ և զգալի կերպով կ'բարձրացնէր ժողովրդի բարօրութիւնը։ Դորա համար հարկաւոր է կարելոյն չափ ընդլայնել «օրինակելի որդնաբուծարանների» շինութիւնները, տեսականապէս ապացուցանելու տեղական արդիւնաբերողներին կատարելագործուած միջոցների առաւելութիւնը։ Իսկ թէ տեղական բնակիչները ընդունակ են գնահատել կանոնաւոր գիւղատնտեսութեան առաւելութիւնը տեղականից, այդ երեւում է Քիւրդամիրի և Գեօկչայի որդնաբուծարանների ազդեցութիւնից, որոնք հիմնուած են վերջին ժամանակներս տեղական ժողովրդական ուսումնարաններում։ Որդների սնուցանելն Գեօկչայի ուսումնարանում առաջին անգամ եղել է միայն ներկայ տարում. դորա համար էլ բնակիչները սկզբում համարեա չէին այցելում որդնաբու-